

Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի հարցազրույցը meganews.am կայքին

Համայնքների միավորումից դժգոհողները, հիմնականում, համայնքների ղեկավարներն են. Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյան

-Ո՞ր համայնքներն են խոշորացվելու Լոռու մարզում:

Լոռու մարզում համայնքների խոշորացման արդյունքում ստեղծվելու է 10 համայնքային փունջ:

Ալավերդի համայնքի փնջում միավորվելու են Ալավերդի, Ակներ, Աքրի, Ծաղկաշատ, Կաճաճկուտ, Հաղպատ, Զիլիզա համայնքները: **Ախթալայի փնջում՝** Ախթալա, Առողջարանին կից, Բենդիկ, Ճոճկան, Մեծ Այրում, Նեղոց, Շամլուղ, Փոքր Այրում, **Ստեփանավանի՝** Ստեփանավան, Արմանիս, Կաթնաղբյուր, Ուրասար, **Տաշիրի՝** Տաշիր, Բլագոդարնոյե, Դաշտադեմ, Լեոնահովիտ, Կաթնառատ, Մեդովկա, Կրուգլայա շիշկա, Մեղվահովիտ, Նորամուտ, Նովոսելցովո, Սարատովկա, Գետավան համայնքները և բնակավայրերը, **Գյուլագարակի՝** Գյուլագարակ, Ամրակից, Գարգառ, Կուրթան, Հոբարձի, Պուշկինո, Վարդաբլուր համայնքները, **Լոռի Բերդի՝** Լոռի Բերդ, Ագարակ, Բովաձոր, Լեջան, Կողես, Հովնանաձոր, Յաղդան, Սվերդլով, Ուռուտ, **Մեծավանի փնջում՝** Մեծավան, Ձյունաշող, Միխայլովկա, Պաղաղբյուր համայնքները, **Շնողի՝** Շնող, Թեղուտ, Քարկոփ, **Սարչապետի՝** Սարչապետ, Ապավեն, Արձնի, Ձորամուտ, Գոգավան, Պետրովկա, Պրիվոլնոյե, Նորաշեն համայնքները և վերջապես **Օձունի փնջում՝** Օձուն, Ամոց, Այգեհատ, Արդվի, Արևածագ, Ծաթեր, Կարմիր Աղեկ, Հազվի, Մղարթ համայնքները:

Պետք է նշեմ, որ փնջերի այսօրինակ ձևավորումը երկարատև քննարկումների արդյունք է: Հաշվի առնելով մի շարք կարևոր գործոններ՝ ընտրվել են խմբավորման ամենաարդյունավետ տարբերակները:

-Ի՞նչ դրական ու բացասական կողմեր ունի համայնքների միավորումը Լոռիում:

- Հայաստանի նման փոքր երկրի համար այս թվով համայնքներ ունենալը չարդարացված շռայլություն է: Կարող է ինչ-որ տեղ ծայրահեղական հնչել, բայց ես խորապես վստահ եմ ու համոզված, որ համայնքների միավորումները միմիայն դրական արդյունք կարող են ապահովել: Ասեմ, թե ինչու: Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ հատկապես փոքր համայնքների բյուջեն ու դրան գումարած պետության կողմից տրամադրված դոտացիան, հազիվ բավարարում է գյուղապետարանի աշխատակազմի աշխատավարձերը վճարելուն: Համայնքներում տեղական բյուջեների միջոցներով տասնամյակներ շարունակ որևէ ծրագիր չի իրականացվում, ավելին՝ մեր կողմից այլ ֆինանսական ներդրումներ ներգրավելու դեպքում անգամ համայնքը չի կարողանում ապահովել 10-20 տոկոս տեղական ներդրումը, իսկ ինչպես հայտնի է, միջազգային դոնորները որևէ ծրագիր իրականացնում են միմիայն

տեղական ներդրման պայմանով: Այնպես է ստացվում, որ համայնքը անմասն է լինում բոլոր տեսակի ծրագրերից, իսկ արդյունքում տուժում է համայնքի բնակիչը: Միավորման արդյունքում՝ համայնքային բյուջեն անհամեմատ մեծ կլինի և հնարավոր կլինի տարաբնույթ ծրագրեր իրականացնել, ներդրումներ ներգրավել:

Համայնքների միավորման հաջողված փորձ մենք արդեն ունեցել ենք: Նախորդ տարի Լոռու մարզում համայնքների միավորման պիլոտային ծրագրի արդյունքում ձևավորվեց Թումանյան համայնքը: Այս ընթացքում նշված միավորված փնջում բազմաթիվ ներդրումային ծրագրեր են իրականացվել՝ թե պետական ու թե միջազգային կազմակերպությունների միջոցներով:

-Համայնքների միավորման հետ կապված դժգոհություններ ստացել եք համայնքապետների կամ բնակիչների կողմից:

-Յուրաքանչյուր փոփոխություն, բնականաբար, առանց դժգոհությունների չի անցնում: Սակայն պետք է անկեղծ լինեմ և ասեմ, որ դժգոհողները հիմնականում համայնքների ղեկավարներն են : Նրանք, բնականաբար, մտավախություն ունեն, որ ընտրությունների արդյունքում կարող են բավարար թվով ձայներ չհավաքել և չընտրվել միավորված համայնքի ղեկավար, ուստի բնակչության շրջանում հաճախ մերժողական տրամադրություններ են տարածում: Այս առումով մենք պատշաճ իրազեկում կատարելու, հավաստի տեղեկատվություն տարածելու խնդիր ունենք,ինչն էլ իրականացնում ենք:

-Այս պահի դրությամբ Լոռու մարզում ի՞նչ առաջնահերթ խնդիրներ կան, որոնք շուրջփուլյա լուծում են պահանջում:

-Չնայած պետական միջոցներով և միջազգային կառույցների աջակցությամբ վերջին տարիներին մարզում իրականացված և ընթացքի մեջ գտնվող բազմաթիվ, այդ թվում նաև խոշորածավալ մի շարք ծրագրերին՝ ինչպիսիք օրինակ՝ Վանաձոր-Բագրատաշեն միջպետական ճանապարհի, Վանաձորի բժշկական համալիր կենտրոնի, Դեբեդի կիրճում՝ «Սմարթ»կենտրոնի և այլնի կառուցումն է, Լոռու մարզում հրատապ լուծում պահանջող խնդիրները դեռևս բազմաթիվ են: Դրանց լուծումն ամենօրյա ջանք ու տքնաջան աշխատանք է պահանջում: Քիչ չեն նաև մեծածավալ ծրագրերը, որոնք նախատեսում ենք իրականացնել մոտ ապագայում:

Հեռահար հայացք գցելով՝ նախորդ 5-6 տարիների ընթացքում մարզում իրականացված ծրագրերին, լուծում ստացած բազմաթիվ խնդիրներին՝ ես լիահույս եմ, ասեմ ավելին՝ խորապես համոզված եմ, որ քայլառքայլ դրանք ևս լուծում կստանան:

Իսկ նպատակներ իրականացնելու կամք, հաստատակամություն և նպատակասլացություն մենք ունենք: